ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը (**այսուհետ՝ Հանձնաժողով**), մասնակցությամբ՝ Հանձնաժողովի նախագահ Հունան Տեր-Վարդանյանի, անդամներ Արա Զոհրաբյանի, Արմինե Ֆանյանի, Միսակ Մարկոսյանի, Գառնիկ Թուխտարյանի, Տաթևիկ Դավթյանի, Արսեն Համբարձումյանի, Արթուր Պողոսյանի և Արտյոմ Սուջյանի,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված «Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման կարգ»-ի 8-րդ կետի 10-րդ ենթակետի, 109-րդ և 121-րդ ենթակետերի պահանջներով,

միաձայն

ՈՐՈՇԵՑ՝

1. Սահմանել որակավորման քննությունների գնահատման չափանիշները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման հավելվածը հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի կայքում:

Նախագահ՝ Հունան Տեր-Վարդանյան

Որոշում N 2/3-Լ
ք. Երևան
26 ապրիլի 2023թ.

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
26.04.2023թ. թիվ 2/3-Լ որոշման

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ի. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

1. Քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության հավակնորդների՝ առաջին փուլի առաջին բաղադրիչի գնահատման չափանիշներ (առավելագույն միավորը՝ 100 (հարյուր), անցողիկը՝ 60 (վաթսուն))

1.1. Հավակնորդին տրամադրվում է 5 (հինգ) խնդիր, այդ թվում՝ մեկական խնդիր, որոնք առնչվում են՝

1) քաղաքացիական դատավարությանը.
2) գործարքների անվավերությանը և դրա հետևանքներին.
3) աշխատանքային վեճերին.
4) սեփականության իրավունքի պաշտպանության վեճերին.
5) վարչական դատավարությանը:

1.2. Յուրաքանչյուր խնդրի լուծման համար առավելագույնը տրամադրվում է 20 (քսան) միավոր, որը ներառում է՝

1) խնդրի եզրահանգման (լուծման) գնահատումը.
2) վերաբերելի նորմերի վկայակոչման գնահատումը.
3) պատճառաբանության (փաստերի նկատմամբ իրավունքի (նորմերի) կիրառման գործընթացի կապակցությամբ դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները) գնահատումը:

1.3. Սույն կետի 1.2 ենթակետում նշված 20 միավորի բաշխումը ներկայացվելու է յուրաքանչյուր խնդրում:

2. Քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության հավակնորդների՝ առաջին փուլի երկրորդ բաղադրիչի գնահատման չափանիշներ (առավելագույն միավորը՝ 100 (հարյուր), անցողիկը՝ 60 (վաթսուն))

2.1. **<u>Հայցի ներածական մասի</u>** (հայցադիմումին ներկայացվող ձևական պահանջներ) համար հավակնորդը գնահատվում է մինչև **5 (հինգ)** միավոր.

2.2. <u>Հայցադիմումի նկարագրական մասի</u> (փաստերի ընտրություն) համար հավակնորդը գնահատվում է մինչև **20 (քսան)** միավոր, որից յուրաքանչյուր ավել ընտրած և վեճի համար էական նշանակություն չունեցող փաստի համար նվազեցվում

է 2 (երկու) միավոր (20 միավորից ոչ ավել), յուրաքանչյուր չընտրած և վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող յուրաքանչյուր փաստի համար նվազեցվում է 4 (չորս) միավոր (20 միավորից ոչ ավել).

2.3. **<u>Հայցադիմումի պատճառաբանական* մասի</u>** համար հավակնորդը գնահատվում է մինչև **50 (հիսուն)** միավոր, որից յուրաքանչյուր ավելորդ (վեճի լուծման հետ ուղղակիորեն կապ չունեցող) վկայակոչված իրավական նորմի և/կամ վերլուծության համար կարող է նվազեցվել 5 (հինգ) միավոր (20 միավորից ոչ ավել), սխալ վկայակոչված (գործի փաստերի նկատմամբ ոչ կիրառելի) իրավական նորմի և/կամ վերլուծության համար նվազեցվում է 10 միավոր (50 միավորի ոչ ավել), յուրաքանչյուր չվկայակոչված (գործի փաստերի նկատմամբ կիրառելի) իրավական նորմի և/կամ վերլուծության համար նվազեցվում է 10 միավոր (50 միավորից ոչ ավել).

2.4. **Հայցապահանջի** համար հավակնորդը գնահատվում է մինչև **25 (քսանհինգ)** միավոր:

2.5. ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կարող է լրացուցիչ մինչև 30 (երեսուն) միավոր նվազեցնել սույն կետի 2.1-2.4 ենթակետերում նշված միավորների հանրագումարից, եթե հայցադիմումի վերլուծությունը չի բխում առաջադրանքի փաստերից և/կամ ներկայացված պահանջը չի բխում հայցադիմումի վերլուծությունից:

*Պատճառաբանություն - փաստերի հաստատման և իրավունքի (նորմերի) կիրառման գործընթացի կապակցությամբ դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները

3. Քրեաիրավական ուղղվածության հավակնորդների՝ առաջին փուլի առաջին բաղադրիչի գնահատման չափանիշներ (առավելագույն միավորը՝ 100 (հարյուր), անցողիկը՝ 60 (վաթսուն))

3.1. Հավակնորդին տրամադրվում է 5 (հինգ) խնդիր, այդ թվում՝ մեկական խնդիր, որոնք առնչվում են՝

1) հարցաքննության ձևերին և առանձնահատկություններին.
2) խափանման միջոցների հետ կապված հարցերին.
3) մինչդատական ակտերի իրավաչափության դատական բողոքարկմանը.
4) քրեական վարույթում ապացույցների և ապացուցման գործընթացին.
5) քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքներին:

3.2. Յուրաքանչյուր խնդրի լուծման համար առավելագույնը տրամադրվում է 20 (քսան) միավոր, որը ներառում է՝

1) խնդրի եզրահանգման գնահատումը.
2) վերաբերելի նորմերի վկայակոչման գնահատումը.
3) պատճառաբանության (փաստերի նկատմամբ իրավունքի (նորմերի) կիրառման գործընթացի կապակցությամբ դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները) գնահատումը:

3.3. Սույն կետի 3.2 ենթակետում նշված 20 միավորի բաշխումը ներկայացվելու է յուրաքանչյուր խնդրում:

4. Քրեաիրավական ուղղվածության հավակնորդների՝ առաջին փուլի երկրորդ բաղադրիչի գնահատման չափանիշներ (առավելագույն միավորը՝ 100 (հարյուր), անցողիկը՝ 60 (վաթսուն))

4.1. Վերաքննիչ բողոքի կառուցվածքի համար Հավակնորդը գնահատվում է մինչև 10 (տասը) միավոր.

4.2. Վերաքննիչ բողոքի հիմքի՝ այն հաստատող փաստերի, ինչպես նաև դրանք հիմնավորող փաստարկների համար Հավակնորդը գնահատվում է մինչև 80 (ութսուն) միավոր.

4.3. Պահանջի ձևակերպման համար Հավակնորդը գնահատվում է մինչև 10 (տասը) միավոր:

4.4. ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կարող է լրացուցիչ մինչև 30 միավոր նվազեցնել սույն կետի 4.1-4.3 ենթակետերում նշված միավորների հանրագումարից, եթե վերաքննիչ բողոքի վերլուծությունը չի բխում առաջադրանքի փաստերից և/կամ ներկայացված պահանջը չի բխում բողոքի վերլուծությունից:

II. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

5. Քրեաիրավական և քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության հավակնորդների՝ երկրորդ փուլի առաջին բաղադրիչի գնահատման չափանիշներ (առավելագույն միավորը՝ 100 (հարյուր), անցողիկը՝ 60 (վաթսուն))

5.1. Փաստաբանական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ հմտություններ և որակներ՝ ներառյալ՝

1) **մասնագիտական աշխատանքի փորձառությունը**, այդ թվում՝ իրավաբանական բնույթի փաստաթղթեր կազմելու կարողությունը, ենթադրյալ վստահորդի հետ հարաբերվելու ունակությունը, փաստաբանական ծառայությունը կազմակերպելու և իրականացնելու կարողությունը, բանավոր համոզիչ խոսքը՝ **առավելագույնը 20 (քսան) միավոր**.
2) **անձնական հատկանիշները**, որոնք կարող են վերաբերել պատասխանատվության զգացմանը, ինքնատիրապետմանը, խոսքի մշակույթին, կարճ ժամանակահատվածում հանպատրաստից կողմնորոշվելու և վերլուծական կարողությունները՝ **առավելագույնը 10 (տասը) միավոր**.
3) **համակարգչային հմտությունները** (այդ թվում՝ word, excel)՝ **առավելագույնը 10 (տասը) միավոր**.
4) **էլեկտրոնային ռեսուրսներից օգտվելու հմտությունը**՝ համակարգչով փաստաբանական գործունեության իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական աղբյուրներից և/կամ հարթակներից արագ փնտրելու կարողությունը՝ **առավելագույնը 20 (քսան) միավոր**.

5) **Փաստաբանի կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի** («Փաստաբանության մասին» օրենք, Պալատի կանոնադրություն, Փաստաբանի վարքագծի կանոնագիրք և այլ վերաբերելի իրավական ակտեր) պահանջներին տեղեկացվածությունը՝ **առավելագույնը 40 (քառասուն) միավոր**:

5.2. Քրեաիրավական և քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության հավակնորդների՝ երկրորդ փուլի երկրորդ բաղադրիչի գնահատման չափանիշներ (առավելագույն միավորը՝ 100 (հարյուր), անցողիկը՝ 60 (վաթսուն))

1) **Փաստաբանի վարքագծի կանոնի խախտման առկայության կամ բացակայության մասին հավակնորդի դիրքորոշումը՝** առավելագույնը 10 (տաս) միավոր.
2) **Փաստաբանի վարքագծի կանոնի իմացությունը՝** առավելագույնը 40 (քառասուն) միավոր.
3) **Փաստաբանի վարքագծի վերաբերելի կանոնի և խնդրի փաստերի հետ համադրված վերլուծություն՝** առավելագույնը 50 (հիսուն) միավոր։